Քառակերպեան աթոռին
Բազմեալն ի բարձրը գահին՝
Անմեղ անարատ գառին
Տաշխ եւ կինամոն խընկին։

---

## 10.

## ՏԱՂ ՎԱՍՆ ՂԱՐԻՊՈՒԹԵԱՆ

Ի քէն Տէր հայցեմ, Հայր գըթական,
Պարգեւեա՛ ինձ իմաստ տեսական,
Երգել բանս վասն ղարիպութեան,
Որ լինի ի յերկիր հեռաստան։

Ղարիպն թէ լինի մեծատուն,
Խելաւքն եւ մըտաւքն իմաստուն,
Նա յիմար թուի յաչս ամենուն,
Եւ կենայ նա տըրտում զօրն ի բուն։

Այլ թէ զղարիպն աստեմ ողբալի,
Անճանաչ՚ու աւտար տեղ հանդիպի,
Միտ ածէ զեւր եղբայրն սիրելի,
Սիրտն ողբայ եւ աչերն արտասուի։

---

**10**. Բնագիր առնուած է Մատենադարանի Թ. 405, Թղ. 10բ—12ա Ձեռագրէն (A). Համեմատուած է Կերլ-Հայաստանեայց Ս. Երրորդութեան Էջմիածնի Թիւ ԽԳ. ա. Թղ. 47ա—48ա Ձեռագրէն (B) եւ Կոստանդնուպոլսի հրատարակութեան (Մկրտիչ Նաղաշ եւ իւր տաղերը, էջ 45—46) հետ (C)։ Հմմտ. Հանդ. Ամս. էջ 288։

Խորագիրն A. ունի. “Տաղ գեղեցիկ ոտանաւոր վասն ղարիպութեան։„ BC. “տաղ վասն ղարիպի։„

2. B. հայցեմք։ — 3. C. պարգեւէ B. պարգեւայ։ C. տեսական։ — 4. A. զբանս։ – 5. C. լինի ի։

6. A. թէ լինայ։ A. եւ խելաւք եւ ...։ — 8. AB. նայ։ A. թըւի։ B. թվի։ — 9. A. նա զօրըն բուն։

11. AC. լինին ՚ու։ C. յօտար։ — 12. A. ի միտ։ B. եղբայր. C. եղբարք։ — 13. A. արտասվի։